


N16



ԻՐԱՎ

Պատօնսթերթ
Խորհրդական
ՀԱՅՈՒ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ԾԵ ՏԱՐԻ

Գ-Դ



1981




ԻՐԱԾ

ՊԱՇՏՈՆՍԹԵՐԹ
ԽԱՏԻՄԱԳՈՒԹԵՄՆ
ԵՀԱՅՈՒ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵԵ ՏԵՐԻ
—

Գ-Գ



1981



Սիոն

ԱՄԱՍԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿԱՐ - ԳՐԱԿԱՐ - ԲԱԼԱՍԻՒՐԱԿԱՐ

ՄԵ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1981

Մարտ - Ապրիլ

Փետ 3 - 4

1981

March - April

No. 3 - 4

S I O N

VOL. 55


A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press

Jerusalem



198-99

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Բ.

Մեր նախորդ Խմբագրականով, իր ընդհանուր զիծերուն մէջ, տուինք Հայ երուսաղէմի երկու պատերազմներու միջն սկսուած և յառաջ տարուած կրօնական, կրթական և տնտեսական գործունէութեան իրազործումները, որոնք աւելի քան զոհացուցիչ էին:

Կրօնական և մշակութային այդ արդիւնքը՝ վանական հաստատութեան մը պարիսպէն ներս իրազործուած, ինքնայտուկ պարագայ մըն է, թէն ինք զինքին հետ հաշտ, բայց քիչ հազորդ Հայ Սփիւռքի ամբողջականութեան, հեռուէ հեռու միայն կցորդ անոր հոգեկան ու մտաւոր ապրումներուն:

Ազգային արժէքներուն հաւատարիմ մնալ, անոնց զիտակցութիւնը ու նենալ և մշակուածը հանրացնել, տարբեր աշխատանքներ են: Մտածումի, զգացումի և կամեցողութեան ինքնուրոյն այդ կերպերը կը կարօտին հայ զրագէտի, զիտունի, արուեստագէտի և քաղաքագէտի գործունէութեան, կարենալ տուեալ ժամանակի մէջ ստեղծելու համար ոզին որ մերը ըլլայ:

Հայ զաղթաշխարհը, իր ֆիզիքական տարանշատումներու պատկերով և հոգեկան նուազումներով ի վիճակի չեղաւ տակաւեն ստեղծելու այս բոլորը ոգերորդ և նպատակ ւորող աշխարհահայեացը՝ անանուն, բայց իրական, զոր դժուար է որակել: Կուսակցութիւնները, յարանուանութիւնները, անհատապաշտ ձգտումները և անոնց իրարու նկատմամբ ունեցած անհանդուրժող և անզիջող ոզին անշուշտ զեր մը ունին, սակայն ստեղծիչը չեն անոր: Այս բոլորէն վեր, տիրաբար իշխող համազգային զիտակցութիւնը մը կարելի չեղաւ ցարդ մշակել Հայ Սփիւռքի մէջ: Հայութեան այդ պատրաստութեան մէջ Եկեղեցին, դպրոցներ և կուսակցութիւններ առանձնաբար, իրենց ոյժերուն ներած չափով, կը շանան պայծառացնել այդ զիտակցութիւնը և արմատացնել զայն: Սակայն ցարդ համազործ և ծրագրուած աշխատանք մը տարուած չէ: Ըսդհակառակն, զիրար արզիող և ձախողանքի մատնող արամադրութիւններ և գործունէութիւններ կը թուին աւելցած:

Սփիւռքի հայ ժողովուրդը տակաւ կը կորսնցնէ խոշոր չափերով հայ ողին յատկանիշերը: Տարբեր ազգութիւններու և մշակոյթիւններու մաշումին ենթակայ, ան կարծես թէ դադրած է դարաւոր մշակութային կեանքի տէր ժողովուրդի մը համբաւին հաւատարիմ ըլլալէ: Այս հանգամանքին արդիւնքն է թերես որ այսօր դէպքերը կը վարեն մեր ճակատագիրը, բայց էր երբեմ երբ

Անսր մեր կեանքը կը չինէինք դէպքերու ազդեցութիւններէն վեր իմաստութեամբ մը և մղումներով։

իրողութիւն է թէ Հայ գաղթաշն արհը դրուած է իրական տազնապի մը առջի : Եթէ Սփիրոքի մէջ անձնիւր հայ գտունայ իր պատկանած երկրի քաղաքացին . իր զաւակներուն տայ միայն այդ երկրի գաստիտակաւթիւնը, ապրի նոյն աշխարհամասի քաղաքական կեանքով և մշակոյթով, բոլոր գժուարութիւնները կը հարթուին, բայց կը չքանայ նաև հայութիւնը : Սակայն անհատաբար միայն մարզիկ կրնան այսկերպ խորհիլ, և որքան տկարանայ ազգային դիտակցութիւնը, նոյն համեմատութեամբ կը շատուայ այսկերպ մտածող անհատներու թիւը :

Եւր մտածենք թէ Սփիւռքի հայութիւնը պանդուխտ է և իր գոյութիւնը առժամանակ է, մինչև որ բացուին իրաւունքի և արդարութեան դուռները, այն ատեն մենք կը փրկաւինք, որոշ չափերով, համակերպութեան մղաւանչէն և Սփիւռքը կազմող գաղութներուն մէջ ի գործ զրուած ճիզերը իրենց նպատակին կը հասնին: Երբ մեր հոգիներէն բացակայի այս հիմնականը, արտասահմանի մէջ ապրողները կը բաւարարուին տեղական կարիքներու առօրեայով և հետզհետէ կ'ալոտի ապագայի հաւատքը:

Մեր մեծ աղէտէն ետքը, տեսիլքով մը շարունակեցինք ապրի, և սա-
կայն վաթսուն տարի է կը տատանիխը օտար ափերու վրայ. Պատկերը խոր-
տակուած մեր ժողովուրդին: Մինչև երէկ, Սփիւրքի ամբողջ տարածքին վրայ
տակաւին կարօտն ունէինք մեր անցեալին, մեր լեզուին, մեր Եկեղեցին, մեր
աւ անդութիւններուն և սրբութիւններուն, հայութեան: Տակաւին մինչև երէկ
կ'երդնուենք մեզի պարտադրուած Բարեկոնին մէջ, նման անոնց՝ որոնք երդ-
ունցան շառ գետս Բարեկացւոց չմոռնալու իրենց անցեալը, իրենց հողը, և
այն բոլոր արժէքները որ ցեղին էին: Երդումը հաւատք մըն է: Մինչև երէկ
հաւատք ունէինք հայ ժողովուրդի ողեկան դիմադրականութեան մասին: Խսկ
այսօ՞ր, տխուր է պատասխանը:

✓ Աւագակալին բարոյախօսներ, որոնք կը բացատրեն թէ յիմարու-

թիւն և բարբարոսութիւն է տառապիլ, թէ տառապանքը կ'եղծէ նկարագիրը, կը ջլատէ ոյժերը, հետեարօր ինչո՞ւ քաշաբերել մեր ժողովուրդը որ հայ մնայ, ի զին անհնարին զոհողութիւններու և տառապանքներու Աւազ՝, ուր իշած է մեր ժողովուրդի բարյականը։ Դարաւոր մեր խաչիութեան ճամրուն վրայ չզոհեցինք մեր լեզուն, մեր Եզեղեցին, մեր սրբազն աւանդութիւնները, ուրուք պաշտպան սուրբերը եղան մեր կեանքին։ Արդինետե մեզի պարտադրուած տառապանքը փոխանակ տկարացնելու՝ զօրացուց մեզ։ Տառապանքն ու մահը ոչ միայն կը զեղեցկացնեն հոգին, այլև կու տան աւելի զեղեցիկ ձև մը կեանքին։ Մեծ և հզօր է հոգին երր զիտէ կենալ բարձունքներու վրայ, անէ զիտելու անհուն խորհուրդը տիեզերքին, ժամանակին և կեանքին, իր բար երեսներուն վրայ։

Հելլենական դիցարանութենէն դրուագ մը թելազրական է։ Զաստուածուէրի Դեմետրին կը յանձնուի թագաւորի մը աղջնակը որ զայն կրթէ և աստուածային կատարելութեան բարձրացնէ։ Զաստուածուէրին կը փակէ թագաւորին դուստրը սենեակի մը մէջ և կ'աշխատի ի զորդ դնել աստուածային մանկատածութեան մեթունները։ Հարազատ մայրը աղջնակին կ'ու զէ զիտնուլ թէ ինչպէս կը դաստիարակուի իր զտաւկը։ Դիրան ճեղքէն կը նայի և կը տեսնէ որ Դեմետրէ շաստուածուէրին կը դարձնէ մերկացած աղջնկը կրակին դէմ, խորոված դարձնելու պէս։ և դեռ նման ուրիշ չարչարանքներ, աստուածութեան կարգ և անմանութիւն պարզելու համար իշխանութիւն։ Մեր ժողովուրդը չէ մեռած, մեռած ըլլալու համար։ Տառապած է, որովհետեւ հաւատացած է թէ տառապանքը մեծութեան և կատարելութեան կը բարձրացնէ մահկանացունները։ Նոխընարած է տառապիլ բարյական մտապատկերներուն առջն, բան ընդարմանալ նիւթեական գոհացումներուն մէջ։ Իր կեանքը զինն է եղած այս մեծ և սրբազն իրազորման։

Պէտք է վերջ դնել ամերքանիզմին, որ տառապանքին և տոկալու ճիզին կը հակադրէ զուարձութիւնը։ Պէտք է ուխանի հաւատարիմ մնալ հայ ժողովուրդի յաւիտենական պայքարին, ուխտաւորի մը նման քանիլու մեր ժողովուրդի դիմադրականութեան ճամրայէն, արիւնուտ տաքերսկ և զալիք վաղորդայններու երազով և հաւատքով։

Հայ ժողովուրդի դիմադրականութեան ողին ի յայտ եկաւ նախ իր զիրերու զիւտով, որ զօրավիզ հանդիսացաւ մեր զոյսւթեան, քանդելով մեր վրայ նետուած օտար կամուրջները, մեր հոգիին շղթաները։ Նման դիւցազներզութիւն մը տեղի կ'ունենար շնորհիւ զանքերուն, որ դիմադրական պատուարներ կազմած կը չանցյին վառ պահել զիմադրական ողին, պահպանել ազգային սրբութիւնները։ Երբ ահաւոր աւերածէն յեայ հեռանար թշնամին երկրէն, ազգային այդ ողին գուրս կ'ելլէր վանքերէն, վերակազմելու քանդուածը։ Վանքերու այս ճակատամարտին կը պարտինք ինչ որ այսօր զիտենք մեր անցեալէն։

Ներկայիս ինչպէս կրնանք մշակել և զարգացնել մեր այդ ողին։ Այս հարցն է որ կը մոտանոցէ մեզ, մեր լինել թէ շինելու ճամրուն վրայ։ Դիրերու և վանքերու ճակատամարտներէն վերջ կայ ամենէն ճննաժամայինը, Հայ հո-

զիին ճակատամարտը։ Ճակատագրական այս շրջանին, որ կը կազմէ մեր ղբժռախտ ներկան, ողին է մեր միակ ապաւէնը, հայութեան ողին՝ որուն կառչած պէտք է մնանք պաշտպանելու մեր գոյութիւնը յամառօրէն։ Պէտք է ուխտանք տարիլ և տոկու, այ անանջելու յաւերժութեան մեր իրաւունքը, ինչպէս երէկ՝ այնպէս ուշ այսօր, վասնզի մշակոյթ ունինք, արուեստ ունինք, քաղաքակրթութիւն ունինք, ստեղծագործ ժողովուրդ ենք։ Մենք անպատուղ ծառ չենք, որ պատմութիւնը կտրէ ու նետէ։

Այս երգը զոր պիտի երգեն մեր զգինուորեալ մանուկները։ Այս երկով պիտի կոռւինք, Մեր գերազոյն հրամանատարը հայ հոգին է, որ կենդանութիւն պիտի պարզէն մեր ոգորութերուն և զործունէութեանց։ Հող չունինք մեր ոտքերուն տակ, զրկուած ենք ազգային անկախի կեանքի մը պայմաններէն արտասահմանի մէջ։ Պէտք է տոկալ զօրակոչի կանչելով հայութեան ոյժերը և արժէքները։ Ֆիմադրական արժէք է լեզուն, եկեղեցին, զրականութիւնը, բայց մանաւանդ մեր այժմու հայրենիքը, մեր պատմական հողերու մէկ մասին վրայ։ Սովետական մեր Հայաստանը պիտի դարմանէ նահանջականութիւնը, յուսահատութիւնը Սփիւռքի հայութեան, պիտի խանգավառէ մեզ իր կրակով որ տոկանք։

Տաղանդաւոր ժողովուրդ մըն է հայ ժողովուրդը։ Մտեղծագործ և իր մշակոյթով հապատ։ Պէտք է պահպանել այս ժողովուրդին զոյութիւնը։ Դարերու թշնամութեան դէմ ծառացած, յաղթած ու յաղթուած՝ բայց միշտ կինդանի և առողջ։ Ոճիր զործած պիտի ըլլանք եթէ թողունք որ խամրի, զսանայ, Հայ ժողովուրդը ֆուլքսը նիւթ չէ, ինչպէս են կիսամշակ ժողովուրդները։ Անիկա անցեալ մը ունի մշակոյթ ունի, քաղաքակրթութիւն ունի, իր սրբազն ուխտատեղիները ունի որոնք յաւերժութեան կը նային։

Պէտք է քալենք Սփիւռքի մշուշներէն, ոտքի կոխան ընելով շղարշն անհուն սուզերուն։ Տակաւին կոտրելով ալիքները մեր լքումի պահերուն։ Մասսախաւուղի լինդերքէն դարձեալ ասուապ առ ասուապ պիտի շինուի կապոյտ լոյսը մեր հայրերու Աստուծոյն։

Լեռն է հոն միշտ սրբազն, նման մեր հայրերու հոգիին, յաւերժական, անսասան։ Պէտք է քալենք ճամբայէն յոյսին ու մեր դարաւոր երազին, ասս առուածներուն՝ որ գողցան կաթը երկնքի բովքերէն։ Եւ կամ նման քաջերուն մեր ցեղի անմեռ հէքիաթին, խորն ընդերքին սուլբ լերան, շղթան իրենց կրծելով կարօտն անմար որ կ'այրի ինչպէս անկէզ մորենին։

(Նարութակելի՝ 2)

b.

ԿՐՈՆԱԿԱՆՆ

ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ

«Զի՞ բարի կամ զի՞ զայելուչ,
զի՞ բնակն եղաբ ի միավիճ»
(ԱԼՍ. ՁԼԲ. 1):

Արդարեւ լաւ բան է եղբայրներու ժիասին բնակիլը և վայելուչ։ Սազմունքրդուի մաքին մէջ եղբայրը բառը թիրեա կը նշանակէր համամայր անձեր կամ չառշատ մօտիկ ցեղակիցներ։ Եղբայրը բառը աւելի լայն իմաստով առնելու համար հարկ է մօտենալ Աւետարանին։

Օխուսի վարդապետութեան համաձայն Աստուած՝ նոյրն է մարդոց, ուրեմն մարդիկ եղբայրներ են իրարու։ Համամարդկային եղբայրութեան այս վահմ վարդապետութիւնը կը հնչեցնէր Օխուս այնպիսի ժամանակ մը, երբ քաղաքակիրթ աշխարհի մէջ ընթացիկ էր Հոմո հոմի լուս = Մարդ մարդու գայլ՝ գէրու։

Քան դարեր անցած են Մեծ Դալբենցիի տարիներէն սագին և գեա ևս մարդիկ գայլաբար զիրար կը պատառեն փոխանակ եղբայրաբար միասին բնակիլու։ Այս ի՞նչքան դանդաղ բարեփոխում մարդկային բնաւթեան։

Համամարդկային եղբայրութեան բարձրագոյն վարդապետութիւնը ունեցաւ շատ քարոզիչներ և բազում կազմուկերպութիւններ, բայց անոնք փոխանակ բարձր մարդերու եղբայրական միացումնեն, բաժանումներ և պառակումներ միայն յառաջ թիրեն։ և իւրաքանչիւր խմբառում թիրեն միայն սիփական հոչակից ճշմարտութեան վարդապետութիւնը, և միւս խոչմերերը որպակց մոլորեալ և գտապարտուած։

Քանի քանի կազմակերպութիւններ իրենք զիրենք միայն արժանի համարեցին աստուածային անգամանին և ուզեցին ուրիշները գուրս նեսեկ անկէ։ Իրենք ընտիր ցորեն էին և վատ որում ապրելու

չէր իրենց մօտ։ Արդիւնք՝ անվերջ եղբայրասպանութիւն,

Անոնց մաքէն բնաւ չանցաւ արտին Տիրոջ պատգամը։ Թող տուէք որ որումը ամի ցորենին հետ, չըլլայ թէ որովհերը իւելու ժամանակ ցորենն ոչ փացնէք։ Երբոր ժամանակը զայ և հասունան՝ կը պատուիրեմ իմ ծառանիրուս որ նախ ուրումը հաւաքեն և այրեն և ապա ցորենը ժողվեն շտեմարաններուս մէջ։

Բայց նեղմիտ մարդիկ անհամբերութեամբ կրակի տուին որովները, նոյն կրտկին զոհելով նաև ցանկալի ցորենը։ Եւ այսպէս ցորունակուեցաւ մարդոց կեանքը գործերով։ փոխն ի փոխ որում ու ցորեն այրեցան միասին, ու հասոնք այս օրուան։

Այժմ մարդոց առջև դրուած է մեծ հարցումը։ Միասին ապրիլ կ'ուզէք, թէ միասին մեռնիլ։ Աթօմակոն և ջրածնային ուումքերը պատրաստ են, մի քանի ժամանակ մէջ կորելի է բնաշնչել ամէն կենդանութիւնն երկրի երեսն, իսպառ փացնել գիշութեան և արուեստի գարուոր գանձերը, և այս զմայլիկ դրախտը գարձնել միացաղ մխրակոյու։

Հասուծ է անարկու ժամը, պէտք է տալ վճռական որոշաւմը, միասին ապրիլ, թէ միասին մեռնիլ։ Ումանք թիրես խորհին թէ միջոցը կրնան գտնել շմեռնելու։ Այդ պարզագոյին իրենց վերապահուած են զժոխային տառապանքներ՝ մարմակոն և հոգեկան։

Անշուշտ ամէն ոք պիտի սոսկայ տարածած մահն և գժոխային տառապանքներէ, և կոզմիսկից պիտի ըլլայ ապրեւու։ Ուրիմն պատրաստ։ պէտք է հանդուրժել ուրիշներու ալ ապրելու իրաւունքին այս աշխարհի վրայ։

«Թարերախտաբար ընդարձակ է մեր կրկրագունդը և անգ ունի ամէնուն համար հաւատարապէս։ Ցորենը թող պահէ իր ինքնութիւնը առանց ոսնձգութեան որոմին դէմ, և որում թող չնչէ՝ առանց խեղդելու դրացի ցորենը։ Թող ափիէ խաղաղ համակեցալութեան լայնամիտ սկզբունքը, զոր քան դարեր առաջ հոչակից Մեծ Վարդապետը։

Եւ Սալմոսինքուն դարձեալ թող ձայ-

Նութիւններով՝ Խորշած էր միշտ ցուցա-
ժողովներ ու կեզծ բարեպաշտութենէ,
սրոնք տիրական յատկանիշերն էին Փա-
րիսեցիներու այլամերժ դասակարգին.

Ա. ԳՐԱՎԱՆ

Ա. Ի Ե Տ Ո Ւ Մ

Մարիամ հազիւ արքունքի տարիքին հասած, Յովակիմ և Աննա նշանեցին զինքն իսուսեալը՝ Յովակի, խոսարհ ու պար-
կեցած անձ մը, Դաւիթի տեղէն, հիսոն էր
արհեատով, Կը բնակէր Նազարէթ, որ հա-
կառակ Գաբրիէլու նահանգի սիրութ ըլլա-
լուն կը մար իշխալի վիճակի մէջ, ան-
տեսուած՝ Երկրին տար տէքրէն։ Մով-
սիսական կրօնի սկզբունքներն ու գո-
ղափարները իւրացուցած՝ պարմանուէին
քանիիմը օր իր ծննդաց կարօսը առնելէ
ետք Յովակիի հետ կ'ուղեկորէր Նազարէթ։

Երջանիկ էր Յօվակի։ Սիրու կը յոր-
դէր երանաւէտ այն զգացումով՝ զոր կ'ու-
նեայ մարդ երր ինքզինք կը գոնէ նոր
ու պայծառ կեսնքի մը սեմին կամ մեծ
նպատակի առաջնորդող ճամրու մը անդր-
րանիկ հանդրուանին, կանխոնասօբէն ա-
մուսնացած՝ կազմած էր գողոր բայն մը,
որ սակայն քանդուած ու տարտղնուած
էր վաղումոմ կարուսառով իր կապակիցին։
Երեք իր մանչ զաւակները, Յակոբ, Յօվ-
սէս և Յովաքէն ետք մեկնած
էին հ Յովազէմ, իրենց նոդիները այրող
թոխիծը հովանարիւու Տանորի շրջափա-
կին մէջ Թորայի ուսուցանմերով։

Յօվակի մէկն էր ազնուազգի այն
մորդերէն, սրոնք նիւթի ու փառքի ե-
տեւն վազելու փիտարէն, կը հասամտին
անդհնականի անհմանուած մասը իրենց
հութեան պճնելու կարելի ամէն առաքիւ-

նէ լայնաբաց սրտով և համապարփակ
ոգիով. «Զի՞ բարի կամ զի՞ վայելուէ,
զի բնակին եղասրը ի միասին։»

Այդ ձայնը երբար դրականորէն ար-
դիւնաւորուի, ուրախութիւն պիտի ըլլոյ-
երկինքի մէջ, և ցնծութիւն երկրի վրայի
Նոր նշանաբան մը պիտի շողայ հորի-
զոնէ հօրիզոն, ևՄարդ մարդու եղայրու։

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊՈՒ

* * *

Վաղ գարնան առաւտօտ մը, երբ բնու-
թիւնը տարերային թափով մը զարթնած
խոր ու երկարտունէն իր թմրէրէն, կը
նորոգէր ինքզինք հանդիսագրութովը էր
պէսպիսուն գեղեցկութիւններուն, և երբ
գերեցմանի չուրդին հասած ծերունիներն
իսկ կը գաղցրին մանուան մասին խորհնէլ,
բացուեցաւ մարդկային փրկարգութեան
առամբն առաջին արարը երբ կոյսը
զրազած էր յարդարումովը անշուք ու
կիսամութ իր խուցին, յանկարծ անո-
րինակը ու կաթնաթոյը լոյս մը շաղաց
շորս դին ու իր գէմ գուա սպիտակա-
զգես ու բցամթե պատգամաները Ա-
նենակալին։ Ծփոթանքի ու երկիւղի ան-
միջական ազգեցութեան ներքեւ՝ ուուր ու
միալար ճին մը թռու կոյսին շրթներէն
ու ինկա գետին։ Առանձնութեան պա-
հուն ընդունած այս այցը աւելի կը շե-
տէր իր վախը ։ Ըլլշոյն քեզ, Մարիամ,
Տէր ընդ քեզ, բացագունչեց հրեշտակը,
Լուսափայլ իր թևը երկորելով կոյսին,
ու զիր հանիւզ զինք իր անկումէն։
Ըօրհնեալ ես գուն կիներուն մէջն, շա-
րունակից Գաբրիէլ հրեշտակը, ու անմի-
ջապէս ետք ։ ԸՄ՛ վախնար, Մարիամ, ս-
րովհնեալ շնորհ գտար Աստուծոյ մօսա։
Երկանյին հակը ապա յայննեց պարմա-
նուհին բռն շարժառիթը իր այցելու-
թեան։ Մարիամ արժանացած էր Փրկչին
մայրը ըլլալու գերագոյն պատիւին և ե-
րանութեան։

Մարիամ կը ծփար ընդմէջ տեսիւքի
և իրակնութեան։ Երկիւղի զգացումը
նահանջած էր իրմէ, զիջնով իր անզը
խոր մտածումներու թնճուկի մը, վարու-
նումի ու երկուութեան վիճակներէ տի-
րապետուած։ Կարելի՞ էր մայր ըլլալ, ա-
ռանց այր ճանչցած ըլլալուն նեղ կոյսը
հունաւոր իր մաքով ինչպէ՞ն ըմբռնէր
ծրագիրն ու կերպը մարդկային փրկարգ-
ութեան վիսրբին խորհուրդին։ ՀՀոգին
Սուրբը պիտի գայ քեզի ու Բարձրեալին

զօրութիւնը հօվանի պիտի ըլլայ վրադա, աւելցուց հրեշտակագիտը, վստահութեան շեշտ մը դնենով ձայնին մէջ։ Այս խռովը կարգեցին վհատաքիւնը մանկամարդ կոյսին սրտէն։ Ու շրթները մրմիշեցին մեքենայօքէն։ ՀԱՅԱՍՏԱՆԻ և Տիրոջ ազախին եմ։ Թու ըստիդի պէս թող ըլլայ ինծիս։ Ու աւետարերը տնիկնեռութացու

Հրեշտակի մեկնումէն ետք, Մարիստ
կրկին ինկառ չփոթ կացութեան մը մէջ:
Գիտի պատմէք անշուշտ նեղլութեանը իր
խօսեցեալին: Ի՞նչ անգրադարձ պիտի ու-
նենար այդ Տօնօչիքի վրայ: Գիտի ուզէ՞ր
ապարի շարունակել սոյն յարկին ներքեւ:
Գիտի լքէ՞ր զինը իր բատրին: Սակայն
ինչպէս լըստած զգաւուր երը Տէրը կոս-
տացած էր հնար ըլլալ տեսարար:

Երբ Յովսէի խոնչած ու պարտասուն
տուն կը գտնար երեկոյեան, Մարիամ՝
շինոս ու ամօթխած, հաղորդեց իրողու-
թիւնը անոր. Յովսէի անյարիք իր նայ-
ուածքը գտմեց Մարիամի բարութեամբ
օժուն աշքերուն. Հոն կարգաց անմեղու-
թիւնն ու հնագանդութիւնը Տիրոջ աղա-
խինին:

Նոյն գիշերը, վերջ տալու համար իր սիրաց ալեկպծող հոկտմարտ զգացումներուն, Ցովսէփ որչեց արձակել իր խօսեցնելոր անհաջողւթեա:

Սարիսամ, միւս կողմէն, իրեն վասահաւած ծանր այս բեռն ու գերը ախջակապէս կրելու ու կոտարելու համար խրախոսոյ քաղել փորձեց դժբախս այլ բացառիկ իր ժառավարդի պատճութեան հին էջերէն։ Կը յիշէր պանդուխտ իր ցկզակիցը, որ Աստուծոյ հետ խօսելու բացարիկ առանձնաշնորհումին պիտի տիրանար, ըլլալէ ետք ազատարար իր ժաղափորդին։ Ու շարքը Դատաւորներուն, որոնք իրենց առամասնափոխ ոյժերուն լծորդած գերազանց զօրութիւնը Տիրոջ, մեր Անոր հանդէզ սնծուցած վատահութենէն մերի բաշտեցն, մաքաղեցն Փարզացիներու անառնազօք հորդանարուն գէմ ու պարտութեան մատնեցին զաննք։ Ու գետ նրբաժարմին Դատիին ու հնկայակազմ Գողիքաթը, ինչպէս նաև Սելեկեան իշխանութեան գէմ ճակատող Մակարաւուրդին եղբայրները։

Յաջորդ դիւեր՝ երկրորդ և սիլքն ի
նազարէթ։ Նոյն հրեշտակը այս անգամ
իր պատգամը կ'ուղղէր Յօվսէփի։ «Մի
ժախոնը քեզի առնել քու Մորիամ կ'ինք,
վասնդի անը ներսիդին ծնածը Սուրբ
Հոգիէն է»։

Յասմէի ընդուռ գուրք սետուեցաւ
անկողնէն ու կիսախուժի իր աշխերը չինե-
լով արթնացւ Մարիսման ու ակդիկացւաց-
զինք երկրորդ տեսիլքի մասին, Տեսիլքը
փարուսած էք մզգաւանչը, Քաղցր ու հեշ-
տագին սորոսու մը կ'անցնէք իր միսե-
րէն, Նման անոր՝ զոր կ'առևինոյ մտրդ-
ամէն անգամ երբ ճակատագրին կտիմարդ-
թէն կը օրէ իր ճամբէն մշունինը վա-
խին ու շփռթանքին, բոց պահէնով սուիք
պաղողայի մը երկրորդ լուսնինին առա-

Դրացիները օրհնեալ ածոյին թերաւ-
կաւառութեամբ բայց յարտառուն հետա-
քրքրութեամբ կը հետեւէին խոնարին այդ
յարկին ներքեա կատարուած անցուգար-
ձերուն, Փրկիչ մը որ պիտի սովորացր-
ուէր կոյսի մը որդունդին մէջ անըմբը ըս-
նելի էր ի իրենց համար, մասնաւանդ որ
Ծոփսէի ոչինչով էր ոչչագրու, Աչ ան-
դամ էր Սենեգուսի մազովին, Աչ կը
պատշնէր որինսպաս Փարիսիցին անուղու-
դասիկառոցին, Զոյնէր հմասական առածո

զարգացում ու չէր նաև բարեկրոց կամ
մեծահարուսաւ, Շատերու համար բարու-
սանք անդին չէր անցներ ինչ որ կը
չըլէր բերնէ բերան տախիլքներս մասին։
Իրենց աշխերուն միայն կը հաւատային
անոնք ու թանձրացնուէ, նիւթին չափ
կարծր իրողալիւններոււ և մի խօսք,
խորտակուած էին թեւեր իրենց հոգինն։

Յաղակի և Մարիամ բնաւ չէին աղ-
ջըւեր իրենց շուրջը թանձրացող անտար-
քերութենէն, Բապիկ հոգիններու ծաղրն
ու քամահրանքը անգամ կը դիմաւորեին
ներողամիու ու քաղցր ժամանուի, Մարդ-
կային փաքրուգի ու սնոսաի հաշիներէն
վեր ու հեռաւ, անոնց տեսական խոկու-
ներով ու աղօթքներով կը հանգերէէին
իրենց անձերը, ըլլալու համար չիրեւն-
կալներն ու խանճատարները Մանկացեալ
Աստղակածորդին։

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

(Հարության ամսագիր 1976 թվականի 1976 օգոստի թիւե)

243. — Եթանութեան առակուրիիւ: Ընդդէմ այս յայտնութեան բանձներուն, որոնք ուշ կը ցուցնեն հաստացմանց վերջին օրը, անշուշտ ոչինչ կը զօրին այն խօսքերը, որոնց մէջ կը յիշտակուին արդարներուն խոստացուած երանութիւնները և մեղաւորներուն սպառնացած տանձանքները, որովհետ անոնք ժահէն ետքի անմիջանութիւն չեն ցուցներ, այլ հաստացմանց հաստատութիւնը և սուլոգութիւնը. Գրութէ, գրութէ, այս, աւետարունին մէջ անգել մեռնել աղքատին. և տառնել հրեշտակացն զնո՞ւ ի գործն Արքանամու, Մեռաւ և մեծատունն և թաղեցաւ, եւ ի դժոխս ամբորձ զախ իւրա ետքին (Ղե. Ժ. 22-23), Սակայն, նախ առակ է ըստածք և ոչ թէ պատմութիւն, ուստի և եղելութեան մասին ոչինչ կը հաւասարէ, և երկրորդ՝ լատինաց կատարութիւնը շի համապատասխաներ յաւնականին և մերինին, զի տնոնք կ'ուզեն կորդալ և ու թողեցաւ ի գործոս, որպէսզի իրենց կործիքը հաստատեն, եւ ի վերջոյ, ի՞նչ է Արքանամու գոզը, մւր էր Պատարու, ամէն պարագայի մէջ, յաւիտենական վարձաց արքայութիւնը չէր ան, գործոքն այ չէ ուրիմն յաւիտենական տանջանքի տեղը:

244. — Աւազակին խոստումը: Հոսվածէականները յառաջ կը բերեն Քրիստոսի ըստն խօսքը աւազակին, այսօր ընդ իսկցեա ի դրախտիս (Ղե. Խթ. 43), պնդելով այսարքին վրայ: Սակայն, ոչ այսօրը իսկայնը կրնայ ցուցնել, զի նոյն իսկ ըստ հոգայեցաց կարծիքաց, գոյնէ Քրիստոսի յարութեան և համբարձման պէտք էր սպասել, և ոչ թէ «Երախտաք յաւիտենական արքայութիւնը կրնայ նշանակել ըստ ինքեան, և որպէսզի կարող ըլլայինք մեկնողաբար տարծել իմաստը, պէտք էր որ ուրիշ աղքակին իմացած լի-

նէինք առոյցքը: Յառաջ կը բերեն նաև Յայտնութեան Գրքէն արդարներուն համար ըստածքը թէ գաւային առաջի աթոռույն և տառչի գաւինն՝ որկեալ զիւրեամբք հանգերձա սպիտակո և արմաւենիս ի ձեռս իւրեանց (Յայտ. կ. 9), որուն մէջ յաւիտենական երանութեան վայելքը կը հաստառուի, սպիտակ հանգերձներով և Աստուծոյ տիտուին տոշն կիւնալով: Բայց գիտաւի է նախ որ տեսիլք է այդ գըրաւածքը, և է որ կը խօսի՝ ինչպէս ամբողջ Յայտնութեան հիւսուածքը: Եւ երկրորդ՝ անսնց համար որոնք սպիտակ հագած են, այլուր յատկապէս կը նշանակուի ակնկալութեան վիճակ, տառւանցա զի հանգեցներ սպիտակո, և տասցանցա զի հանգեցներ փոքր մի ժամանակ, մինչեւ լցցին ծառայակիցք նոցա և եղբարք նոցա, որք հանգերձեալ են կատարութիւնը իւրեկ զնուածա (Յայտ. Զ. 11):

245. — Կայսեր: Մանօթ է նայնպէս եղելցւույ ընդհանուր մէկ կարծիքը, որ մանաւանդ յայտնուած է եկեղեցական յազմական երգերուն մէջ և ծիսական պարագաներուն մէջ անդամ, որոնց մէջ անսնք որ ուուր են կը նկարագրուին արգեամբք վայելող տառուածային տեսաւթեան և ամէն բարեաց և երանութեանց. որոնցմով պիսի լրանայ յաւիտենական հաստացմանց ամբողջութիւնը: Աւելորդ է այս մասին յառաջ բերել վկայութիւններ, ամէն քրիստոնեաց տեղեակ է այս իրողութեան: Հորի է ուրիմն որ ըստ եկեղեցւոյ աւանդութեան ընդունինք թէ վարձանեանելուներու հոգիններ նոյնին ուստացման մը, ոչ անմասն ակնկալեալ քարիքներէ և ոչ զերծ երկուցւած չարիքներէ, և թէ հոգիններու կայտները տարրերեալ են ըստ հանգամանց, եթէ չուզենք զատ զատ որոշուած ըսել աղջայ, կամ թէ բաշխուած է ըստ մասանց, եթէ չուզենք ըսել ըստ թուոյ: Մեր վարդապեսներուն կարծիքով, ըստ Տաթևացւոյն, կը զատարոշուին երկու կայտներ, մին երկնից վերեւ, մինուը երկնից ներքնը Առաջինին մէջ ժողովըւած են անսնք որ թաղուցին ամէն ինչ է գացին Քրիստոսի հակէն, իսկ երկրոր-

դին մէջ կը գումարուին անոնք որ այդպիսին չեն ըրած, անոնք են սրոնիք սառասարայի գործունէութենէն և աշխարհի կիրաքերէն գրաւուած, կը մասն սպասելով հանդերձեալ գատաստամին, որպէսզի գութով բաւուին և ոզորմութեած արժանանան, Այս երկու կայսնները կը կոչւաւին աշխաղողեան իսրուն: Իսկ ձմբան կողմեան խորանց այն է ուր կը ժաղազուին հոգիները չարերուն և մնաւուններուն, սրոնք գատաստանով պիտի գտասպարաւուին: Աջակողմեան և ձախակողմեան կոչումը նիւթակոն զեանդման իմաստով չէ, այլ կը նշանակէ Քրիստոսի քաղցր հայեցողութիւնը որ այն է, և զան հայեցողութիւնը որ ձմին է: Իսկ Տաթեացին է որ կը յայտնէ այս կործիքը թէ բոլոր հոգիները մէկ տեղի մը մէջ են, բայց զանազանութիւն կայ անոնց գործերուն և անսպին մէջ, ոմն լի է անմառնութեամբ և խնդութեամբ և ոմն գառնութեամբ:

246. — Կայսերին նանգամանքր: Խոկ թէ թ՞նչ բանով առաջին կործիքը կը ուրբերի հոսկմէտկաններուն կարծիքէն, դիւրին է նկատել թէ օւրիշ է ընդունիլ նախապատճական վիճակ մը յօյսի և երկիւղի, առանց որոշման գատաստանի և վայեկման վերջնական հատուցման, և ուրիշ է ըսել թէ ամէն ինչ վերջացած է, գտաստանը և վճիրը հատուցման են, որով այլևս տեղի չի մնար գտաստանի, հետեւարար այլևս չեն արգարնար այն խօսքերը զարս Քրիստոս կ'ընէ գտաստանի օրուն նկարագրականին մէջ, որովհետեւ այլևս պէտք չի մնոր օդիքը բաժնել այծերէն, և ոչ ալ գործիքը քըննելու և հետեւարար բարիները արքայութիւն մտցնելու և չարերը զժախք նետելու, մինչ միւս կերպով ուրբերը արքայութենէն պիտի գրկուէին տաեն մը, վերսախն գտառելու համար, և մեղաւորները գոնէ առժամապէս պիտի զերծոնէին գժախքէն, կրկն գտառելու համար գտաստանով: Մարդոց հոգիներուն նամեմատ պէտք է խօսիլ նաև աննիւթական հոգիներուն համար, վասնզի շատեր կան որ կ'ըսեն թէ հրեշտակներուն և գեւերուն:

Կամոր ալ գտաստան պիտի ըլլայ, և թէ բարի և չար հրեշտակաց կայտնները նայնինքն բարի և չար մարդոց կայաններն են, և առկէց է որ յաճախ արդարները ընտկանէց կ'ըսուին հրեշտակներուն և չարերը գտեւերուն: Նմանապէս, ուրբերը յառաւորեալներ և ի փառ հանգուցանեներ կը կաշենք: Բոյց փառքը կրկնի իմաստ ունի, զի ուրիշ է գործոց փառքը, և ուրիշ՝ հատուցմանց փառքը: Առաջին կը պատկանի յայսի կայանքին, երկրորդը՝ երեսից արքայութեան: Առաջիննը միշտ կը փայլին արդարները՝ գտաստաննէն առաջ, երկրորդը՝ պիտի փայլին գտաստաննէն վերջ, որով աջակողմեանները փառք պիտի բարձրանան, վերանան երր լսեն երանական օրհնութեան ձայնը, իսկ առ այժմ ամէնուն կը մնայ բարեաց յաւով հանգչի արդարոց օթեաննին մէջ մինչև Քրիստոսի մեծ գալուստը:

247. — Պետական անւնը յաճախ կը գործածէ իբրև անսեւ այն տեղին ուր է հոգիներուն կայանը, և այս անւնը կը համեմատուի եղեմական գրախանի հետ, կործուելով նոյն այն տեղը, ուսկից արտաքսուեցաւ Աղամ, և ուր կը գտանան արդարներուն հոգիները, մինչեւ գտաստանին օրը յաւով հանգչելու համար: Սակայն Տաթեացին այդ պիտաց յարմարեալ կ'ըսէ առոր համար, որովհետև անմարմին հոգիներու համար մարմաւոր կայտնի պէտք չկայս: Այս պատճառու խորհրդական իմաստով պէտք է հասկնալ էկրանեալ աւագոկին բացեր գդաւուն Ադին գրախանին, և անորութեալ կաման ինը եղ գտապակն ի մէջ դրախտին, որոնք անշուշտ յարմարեցւած են Քրիստոսի Ալյոսր ընդ իս իշեալ գրախանին խօսքին (Դկո. իդ. 43):

248. — Հռովմէականաց կարծիքին ճամանակը: Յոյց ի դէպ է այստեղ յիշեցնել այն խնդիրը, որ կը յաւզուէր որեմուտքի մէջ, Գամինիկեան և Ֆրանչիսկեան վարդ գտապառութեանց միջև: Վերջինները կը պաշտպանէին թէ արդարներուն հոգիները, յարութենէն և գտաստաննէն առաջ:

թէն երկինք վերտացած, չեն վայելիք առաւածային երանակոն տեսութիւնը, այլ միայն կերպած կը մեռն Վրիստոսի առջև, բայց մարդկային կերպարանին, որ է Գոռուն Աստուծոյ: Խոկ առաջինները կը պարզէին թէ մահէն անմիջապէս կաքը, եթէ արգուր են, կամ մարդարանին մէջ սրբուելէ վերջ կը մտնեն արթայութիւն և կը սկսին վայելիք յուրիստներական հատուցման երանակոն տեսութիւնը: Ցովաչափնես իթ: Հռովմի հայրապետ հոստաւաց Ֆրանչիսկինոնց վարդուղեառութիւնը (յամին 1320), իսկ իր յաջարդքը՝ թենեգիկոս մք. բառնինք առքիներ յետայ (1345) Դոմինիկինոնց կողմբ բռնուի հաստատեաց այն կարծիքը որ այժմ կը արիք կատինաց ծեղկցեցիներուն մէջ, բայց յայտնապէս կ'երկի թէ նորոգոյն դաւանութիւն մըն է այդ: Յայտնի է թէ Դոմինիկինուներէն էին Ռախիթոռները, որոնք հայցը մէջ հռովմէտական կարծիքին առաջին պաշտպանները եղանք:

249. — Հազարամետյայք: Հազարամետյաց
կամ Քիլիստառայց կարծիքը երեկուա Ե-
կեղեւոյ տառջին դարերուն, իրրե վեր-
ջին Այստք ակնկալութեան Քրիստոսի
մօտալուտ գալստեան, և իրր բռուակին
մեկնութիւն Յայտնութեան խօսքերուն,
ուր կը տեսնուին որ արդարները հազար
ամ կը թագաւորեն Քրիստոսի հետ (Յայտ.
հ. 4): Այդ թագաւորութիւնը պիտի տեղի
ունենար երկրի վրայ, ուր Քրիստոս
վերստին պիտի երեւէր իրրե թագաւոր
իր ընտրեաները, որոնք իր հաստաքին
համար նախատեսկուեցան կամ որոնք չու-
րացան Անոնք հուտառքը, պիտի միտոսին
թագաւորեին տառջին յարութեամբ մինչև
երկրորդ յարութեան ժամանակը, որմէ
վերջ երկինից արքայութիւնը պիտի մշտա-
նէին: Նույնի հայրերէն ամանք եւ, ինչ-
պէս Պապրու, Յուլիանոս, Երանոս և
Լուկրետիսնոս հազարամետաններէն կը հա-
մորուին, սակայն անեսց կարծիքը տար-
քը էր Քիլիստառայց կարծիքէն, որոնք
հազարամետյա թագաւորութիւնը երկրուոր
ենշտութեանց մէջ կը հաստատէին, մինչ
տառջինները սուրբ և հոգևոր վայելիքնե-
ուու մէջ եւ ունէին պայն: Հազարամետյաց

կարծիքը նորոգուեցաւ արևմտաքի մէջ ժի՞ Դարռուն, Կայսրութիւն Յօվակիմ Արքայի ձեռքով, որ տաշնորդ եղու Յովակիմինց ազանդին, ու թողոքականաց ծագումէն Կաքը անոնցմէ ոչ՝ սակաւք ընդդրկեցին հազարամետաց վարդապետութիւնը, պատշաճնեցնելով զայն Նեռին և պառկած Բարեկոսի տնկման (Յայտ. Ժ. 2), որուն ոչչ ուղեցին անսնել Հռովմի Եկեղեցիին պատկերը Սահայան հիմակ յայլա չեն երկիր հազարամետներ, և անոնց Կարծիքը պէտք է դասել ի կարդ վաղնջական երկութիւններ, որոնք արժանի իսկ չեն յիշատակութեան իրեւ վարդապետական գործ թիւն:

250. — Աշխարհի կառաւութը: Հաստա-
տելէ վերջ թէ ոչ մէկ վճիռ և ոչ ալ հա-
ստացման գործադրասթիւն կը լինին նըն-
չեցալներու վրայ իրենց մահուան բո-
պէին, կը մնայ խօսիլ այն գործերուն և
պարագայից մասին, սրոնք պիտի կա-
տարուին աշխարհի վախճանին: Ետո են
այն խնդիրները սրոնք կը յաւզանին կա-
տարածին մտորն և Աւետարաններուն և
Առաքելական Թռողթիւնուն մէջ կազմ կան-
խասոց գուտական թիւնները, թէև ամէնքն
ալ խորհուրդի և գտալուութեան գարա-
գոյրով ծածկուած ըլլալով տեղի կու տան
մնկութիւննց և բացարաւթեանց, իրաւ-
գանչիւր անձի քմանածոյից համեմատ,
Եւ այս՝ ոչ միայն այժմ, այլ նաև նախ-
կին և առաջին գարերուն, Պօլոս կատա-
րածի ժամանակին մասին երբ կը խօսէր,
իբր կանխազեկոյց նշան կը ցուցնէր Սուտ-
թիստասի գալուստը. որ է բակլ թէ
պիտի տեղի չունենար Քրիստոսի գո-
լուստը, օթիք ոչ էկացէ նախ ապստամ.
բութիւնն և յայտնեսցի մորդն անօրէ-
նութեան (Բ. Թեա. Բ. 3): Այս իսկ է որ
կը կոչուի բատ մեզ նեռն, անունն են
քոնի, սրան աւրիշներ ես կը պատշա-
նեցնեն նախքրիստասի ժամին Յովհան-
նու խօսքիրը: Ներին գալուստը, և անոր
ձեռքով կատարելի սպառածամբար չտ-
րութեանց և ամբարշտութեանց գործերը
առանց մանց ճանակելու վերացած նոսվքի
և Եղիսայի երեւիլը և անոնց վկայութիւնը
երկնքի անկատացումը, երկրի կործանու-

մը, երկնային մարմիններու համանգաւամայն խռովակիլը և ներկայ սինկրուական դրութեան խռովարումը, այդ ամէնց ուրոնք կատարուծին իրք հանգամտնքները կը յիշաւին, մեր խօսքին հետ որեւէ կապ չունին, որովհետեւ կարելի չէ զանոնք հաւատոց մասանք նկատել, և ոչ ալ իրրե դաւանական կէտեր, յայտնութեան զորութեամբ, այլ առաւելն իրք ակնկայեալ գուշակութիւններ:

251. — Մեռելոց յարութիւն: Սակայն կորելի չէ նոյնը ըսել մարմիններու հանգերենալ յարութեան մասին, որ իրք դաւանակէտ արձանագրուած է Հանգամտնակին մէջ, իսկութեան մէջ հիմնական նկատուածները հետեւեալներն են. — Նախ թէ ընդհանուր է յարութիւնը բոլոր մարդիկ որոնք նեղ են աշխարհի բոյայ, պիտի կիսդանանան վերօնին: Երկրորդ՝ յարութիւնը պիտի ըլլայ նարգ մերձեցմամբ մարմիններու հետ և այն՝ իւրաքանչիւրինը իր սիփական մարմինին հետ, ու պահելով էական և սեռական հոնդամանքները, զոր ունէր մահուան ատեն, Երրորդ՝ յարուցեալներուն մարմինները ի նորոյ պիտի ստանան անուպականութեան ձիրքեր, որոնցմով այլիս պիտի չլուծուին և պիտի չմեռնին, թէպէտե այդ ձիրքերը տեսակ տեսակ պիտի ըլլան, նայելով թէ սեր պիտի մտնեն յարուցեալները, յաւիտենական կենաց թէ յաւիտենական տանհանաց մէջ Ռուրիշ խնդիրներ ևս յարութիւններուն մէջ, մանաւանդ դպրոցականներուն մէջ, մարմիններու նոյնութեան, բազկացուցիչ տարբերութեան, մատաքման, մատերութեան, անդամներու խնդութեանց և թերութեանց, հասուկի կամ տարիքի, հասուկի երկարութեան կամ չափի և մարմինին թանձրութեան և տառնց նման արտակարգ մանրամասնութեանց շաւըչ, Բայց առոնց համար ոչ Ս. Գիրքէն կարելի է ստոյդ բան մը քաղել և ոչ ալ դաւանական ստուգու-

թիւններ ձեռք բերել: Այսպիսի հարցեր, գլուխական մատյնութեան ծնունդ մնեմամբ, այժմ հաղթմէսկաններուն մէջ անգամ չեն արծարեն նախկին շահագրգռութիւնը:

252. — Յարութեան փաստ: Մեռելոց յարութեան ճշմարտութիւնը աներկրայ և աւետարանական վարդապետութենէ, այնու զի Քրիստոսի օրով Սագուեցիները կ'ուրասային զայն և Քրիստոս ուղղակի կը մերժէր անոնց մոլորութիւնը (Մատթ. իթ. 31, Ղե. ի. 38): Նոյնպէս Պօղոս ալ քահանայապետին տառանին մէջ Սովորութիւնները յանդիմունելու համար յարութեան ինդիրը մէջ կը բերէր (Գործք, իդ. 6): Բայց մէնք զայն ուղղակի վարդապետութեամբ ալ քարոզուած կը գետանք Քրիստոսէ, որ կ'ըսէր. սկզնցէ ժամանակ, յարուժ ամեններին որք ի գերեզման կայցին, լուիցին ձայնի նորա և եկեսցին արտաքան որոց բարիս գործեալ իցէ ի յարութիւն կնուաց, և որոց զչար արարեալ ի յարութիւն դատաստանաց (Յովհ. ե. 28). ու առաքեալը կը գրէր. «Հաւատամք եթէ Քրիստոս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և զննչեցեալին ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա» (Ա. Թես. Դ. 13) և հորկ է կարգալ ինչ որ եղբայրոցն կը գրէ առ Կորնթացի (Ա. Կոր. Ժ. Ե.) և Տիմոթէս (Բ. Տիմ. Բ.), յանդիմաննելու համար յարութիւնը ուրացողները: Խոկ այն փասուց, զոր կարելի է քաղել աւանդութենէն՝ հաստատուն է այն ակնկալութեամբ որ եղած է բոլոր քրիստոնեաններուն մխիթարութիւնը այս կիսոնքի տառապանաց մէջ և զոր սկզնեցին շարունակ քարոզած է հետեւելով առաքեալին խօսքիրուն, ուր հաստատելէ վերջ թէ «Մեռելութիւն ի Քրիստոս յարիցն», գը յարէր. «Այսունեան մխիթարեցիք զմիւնեան բանիւրք այսոքիւրք» (Ա. Թես. Դ. 17), ու ասոր կ'ակնարկէր Տիրտուղիանոս երբ կ'ըսէր. «Մեռելոց յարութիւն» քրիստոնէից ակնկալութիւն»:

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՈ. ՕՐՄԱՆԻԱՆ

(Յարունակելի՝ 24)

Ք Ա Ր Ե Ա Կ Ն Ե Բ

Կ'ոզէի քողով ես սրտես մի յուշ,
Զերմիկ արեւին այս մեղրածորան,
Եւ այս վարսագեղ բուվկերուն հնեոյε,
Ու այս ծառերուն, հովտին ու լեռան:

Ասկէ եօֆ ինչի՞ կը սպասես ա՛լ դուն,
Անապատ է լիկ եւ ամայութիւն,
Ցոգնած ուղիւոր՝ անյոյս մի՛ սըզտ,
Անապատին մէջ ովախս ալ կայ:

Ինչի՞ կը սպասես դեռ ասկէ անդին,
Ա՛լ անապատ է ու նոզ, ցաւ ու փուշ.
— Պիս' կանչեմ Յուլեւն իմ լայրավատին,
Նստինք զըրոյցի քախիծով անոյե:

Ի՞նչ ընեմ նիմա՞ սիրս իմ ցընորած,
Ինչո՞ւ ես այսպէս օձիքս փարած՝
Որ զգեղ հանեմ բարձունքներն անհաս,
Չե՞ս տեսներ միքէ քեւերս կոտրած:

Ծառին, ծաղիկին՝ պիս' եղբայրանամ,
Պիս' ամբողջովին ըլլամ ըող, համ, բոյք,
Քեզմէ զատուեր եմ՝ նեզ պիտի դառնամ,
Ողջոյն նեզ բնութիւն, սիրագեղ համբոյք:

Մայր եւկիր օրէ օր կը զեկեցկանաս,
Օրէ օր սէրըս ալ կ'անի ժեզ համար,
Ամէն օր նայուածիս նոր էջ կը բանաս ...
Գրկիդ մէջ ալ կը զգամ քու կարօն անմար:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ո՞Վ Է ՀՈՍ...

Հոյերիկ Արմենա - ի յիստակին

Ո՞վ է հոս,
Ան որ կար ու չըկայ,
Քայլայուող մի Աժարհն,
Մարած զրյգ մ'Արեգակի ...
Երեկ էր որ դեռ ան՝
Ցուցերու էր Մատեան,
Մէրերու սրբավայր,
Երազի օրօրան ...

Ի՞նչ կայ հոս,
Միջոց ու ժամանակի
Գոյօւթիւն չունին հոս,
Մարած են ամէն լոյս,
Զի լրաւուիր ոչ մէկ ձայն,
Զի քովեր ոչ մէկ Յոյս ...
Անսահման, ահուահման
Լըռութիւն է միայն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ճ Փ Է Բ Թ Ի Ն Դ Է Մ

(Հայ պատաճիներուն)

Ներքն ահա կենսավառ պարմաններուն հայլազեան,
Պատանութիւն ու խոստում ու յոյոր մեր ապագայ.
Խինդն ու երիշ կենսուրախ անոնց գէմմէն կը ըողան,
Զանոնք գրկել մի առ մի ու համբուրել ինձ կու գայ:

Սերունդն է այս նոր որուն աշխերուն մէջը չկան
Թափիծն ու ստուերը անարդ մեր որբութեան, զուլումին.
Նայուածն անոնց երազուն՝ կ'այրէ բոցը կարօսին,
Ու օրերուն աւետս՝ համբոյքներէն կը խայտան:

Վաղուան Հայերը ահա, խոստմալի, առնալան,
Խենց ժայռէ հաւատենվ, կամովն իրենց պողպատեայ
Պիտի փետն անպայման նակատազրի ժան ըրբան,
Մրենուն մէջ բռնած բարձր՝ զոյգ Մասիսներն հեռալայ:

Հազար ապրին, քաջ տղաք, մեր կարօսին չափ երկար,
Էլլան սրեն ձեր վահան՝ նետերուն դէմ ոսովսին,
Ու երբ դառնած բոյնը ձեր՝ ինչպէս առուակ մը վարար,
Զեր հայերուն առջեւէն մեղքը ու կաք միւս բիսին:

ԲԱՆԱԿՄՐՄԿԱՆ

ՄԵՍՐՈՊ ԴՊԻՐ ԽԻԶԱՆՑԻ (1608-1643)

Ժի. Դարու առաջին կիսուն, Նոր Զուղայի մէջ իրեւ գրիչ, ծաղկող և կազմող բնեղուն գործունէութիւն ունեցած է Մեսրոպ Դպիր Խիզանցին, Ան որդին էր Մարտիրոս քահանայի և Առողջապահի եղած է աշակերտ յայտնի վարպետ Խիզանցի Մարտիրոս քահանայի և Մազման մականուանեալ Մոկացի Սարդիս երեցի: Իր կարգին ունեցած է աշակերտներ, որոնցմէ ծանօթ են տէր Գասպար, Աթում և Թարուակ երեց:

Մեսրոպ Դպիր իրեւ ոգնուկան ծաղկող յիշուած է Խիզանցի Գրիդորիսի կողմէ 1605 իւն, և Խիզանցի Առաջապահ կողմէ 1607 իւն, իր երեխուկէս տասնամեակիւրու վրայ տարածուալ աշխատանքի արդիւնքներէն ծանօթ են հետեւալները՝ դասաւորած ժամանակագրական կորզով:

1. — Աւետարան, 1608, Սպահանա Գրիչ Ստեփանոս քահանայ, Մազկող Մեսրոպ Խիզանցի, Սատցող խաչաղավելիչան. — Յիշա. Ժի. Դարի, Ա. Հատոր, թիւ 406. — Զեռ. Բրիտ. Թասդարանի:

2. — Աւետարան, 1609, Եօչ Գրիչ Սիմեոն երեց, Սոզկող Մեսրոպ Խիզանցի, Սատցող Մելիք Մուրաս. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 423. — Զեռ. Օքսֆորդի, թիւ 13:

3. — Աւետարան, 1615, Սպահանա Գրիչ Հայրապետ երեց, Մազկող Մեսրոպ Խիզանցի, Սատցող Մարտիրոս Առաթայ. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 748:

4. — Աւետարան, 1618, Ստոթէի Վանք: Գրիչ՝ Մինաս, Մազկող Մեսրոպ Դպիր Խիզանցի. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 880:

5. — Աւետարան (Ժի. Դար): Մեսրոպ Դպիր Նորոգած և կազմած է 1618 իւն. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 886. — Զեռ. Նոր Զուղայի, թիւ 183:

6. — Աւետարան, 1618, Դաշտ գիւղ, Եօչ Գրիչ՝ Յովհաննէս: Մազկող Մեսրոպ Դպիր: Սատցող՝ Թասալի. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 890:

7. — Աւետարան, 1614: Գրիչ՝ իշխամիոս: Մեսրոպ Խիզանցի վերաբին կազմած է 1618 իւն. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 891. — Զեռ. Վենետիկի, թիւ 151:

8. — Աւետարան, 1618, Դաշտ գիւղ, Գրիչ Սարգիս Արեգայ, Մազկող՝ Մեսրոպ. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 901. — Զեռ. Հովհեապի, թիւ 55:

9. — Աւետարան, գրաւած 1280 իւն, Ճեռամբ Վանակացի Ստեփանոսի: Մեսրոպ Դպիր Խիզանցի նորոգած և ծաղկած է 1618 իւն. — Կոն. թիւ 8: Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 910:

10. — Յայսմաւուրք, Մեսրոպ Դպիր Նորոգած և կազմած է 1619 իւն. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 945:

11. — Աւետարան, 1619, Եօչ: Մեսրոպ Խիզանցի գրած է Յովհաննա Գրիչ: Սատցող Ստեփանոս քահանայ. — Յիշա. Ժի. Դարի, Ա. թիւ 947. — Զեռ. Նոր Զուղայի, թիւ 110:

12. — Աւետարան, 1623, Ասպահան: Գրիչ Ստեփանոս քահանայ Ջիք: Մազկող Մեսրոպ Դպիր Խիզանցի. — Զեռ. ի Լեռնիդրագ: Յիշա. Ժի. Դարի, Բ. Հատար, թիւ 148:

13. — Յայսմաւուրք, 1623, Եօչ: Գրած է Մեսրոպ Խիզանցի, Ամիր Սարգսի ցանկութեամբ. — Յիշա. Ժի. Դարի, Բ. թիւ 154. — Զեռ. Նոր Զուղայի, թիւ 239:

14. — Աւետարան, 1624, Նոր Զուղայի: Տէր Հայրապետ գրած է առառածածուէր Մարգարտի ցանկութեամբ: Մեսրոպ Դպիր ծաղկած և կազմած է. — Յիշա. Ժի. Դարի, Բ. թիւ 199. — Զեռ. Երևանի, թիւ 3598:

15. — Աւետարան, 1624, Ասպահան: Գրիչ Մեսրոպ Խիզանցի: Սատցող Գինոս սրդի Եղանակի. — Յիշա. Ժի. Դարի, Բ. թիւ 222. — Զեռ. Նոր Զուղայի, թիւ 111:

16. — Մասունք Աստուածածնչի, 1627?: Գրիչ Մեսրոպ Դպիր: Սատցող՝ Գրիգոր Վրդ. Մշեցի՝ աշակերտ Հայրապետ Վարդապետ Ղուլթըզեցյ. — Յիշա. Ժի. Դարի, Բ. թիւ 368. — Զեռ. Երևանի, թիւ 146:

17. — Աւետարան, 1627, Ասպահնան, Գրիչ և ծաղկող Մեսրոպ Խիզանցի: Ստացող Խոջայ Մարտիրոս. — Զեռ. ի Թիֆլիս: Յիշտ. Ժիշտ. Ժիշտ. Բ. թիւ 394.

18. — Աւետարան, 1627, Նորաշէն գիւղ, Շոշ: Մեսրոպ Խիզանցի գրած և ծաղկած է խօնայ Խոչիկի դուստր Ազատ խաթունի ցանկութեամբ. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 398. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 119.

19. — Յայսմաւուրք, 1627, Ասպահնան, Գրած է Բարենց Երեց «ի խնդրոյ ... Խօնայ Գրիգորին»: Մաղկող Մեսրոպ Խիզանցի: — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 399. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 240.

20. — Դիրք Հարցման Գրիգորի Տարբեցույ, 1627, Նոր Զուզայի: Գրած է Հայրապետ Երեց, Խուճայ Եղիազարի պատուէրով: Մաղկող Մեսրոպ Դպիր. — Զեռ. Ա. Յ. թիւ 3425:

21. — Աւետարան, 1628, Ասպահնան, Գրած է Գառապար Երեց՝ Նուրիջանի դուստր աստուածասէր Գուլգարդի փափաքով: Մաղկող Մեսրոպ Խիզանցի. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 442. — Զեռ. Երեանի, թիւ 6437.

22. — Աւետարան, 1628, Ասպահնան, Գրած է Գառապար Երեց «ի վայելումն տէր Աւագին»: Մաղկող և կազմող Մեսրոպ Դպիր. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 478.

23. — Աւետարան, Ժիշտ. Մեսրոպ Խիզանցի Վերսախն ծաղկած և կազմած է Զուզայի խօջայ Խոզարի ծախուսվ. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 493. — Զեռ. Երեանի, թիւ 222.

24. — Աւետարան, 1629, Ստոթէի Միծ Անապատ, Գրած է Մինսո, մահասաի խօջայ Եղիազարի ցանկութեամբ: Մաղկող Մեսրոպ Խիզանցի. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 1243 և 512. — Զեռ. Ա. Յ. թիւ 2348.

25. — Յայսմաւուրք, 1630, Յարեան գիւղ, Շոշ: Բարենց Երեց և Մեսրոպ Խիզանցի գրած են «ի խնդրոյ ... մահասաի խօնայ Եղիազարին»: Մաղկող Մ. Խիզանցի. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 586. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 241.

26. — Աւետարան, 1633, Ասպահնան, Մեսրոպ Խիզանցի և Աստուածատուր սարկաւագ գրած են «ի խնդրոյ ... պարոն մէլիք Զաքարէին»: — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 774. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 114:

27. — Աւետարան, 1634, [Նոր Զուզայի], Գրիչ և ծաղկող Մեսրոպ Խիզանցի: Մատող՝ Շահփարի. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 838. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 117:

28. — Յայսմաւուրք, 1635, Թորըսկան գիւղ, Ասպահնան: Գրած է Գառապար քահանայ՝ խուճու Գևարսուի ցանկութեամբ: Մաղկող Մեսրոպ Դպիր Խիզանցի. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 918. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 42 (Բ. Հատոր):

29. — Յայսմաւուրք, 1637, Թորըսկան գիւղ: Գրած է Դասպար քահանայ՝ խօջան Թասալիի ցանկութեամբ: Մաղկող և կազմող Մեսրոպ Դպիր. — Յիշտ. Ժիշտ. Դարի, Բ. թիւ 1040. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 245:

30. — Աւետարան, 1637, Նոր Զուզայի: Գրիչ՝ Կրիգոր: Մաղկող Մեսրոպ Դպիր Խիզանցի, սրուն գործերուն լուսագոյնն է, ըստ գնահատութեան Ս. Տէր Ներսէսեանի: Մատող զօջայ Դաւիթ. — Զեռ. Ա. Յ. թիւ 2617:

31. — Ճաշոց, 1643, Շախասորան գիւղ, Նոր Զուզայի: Գրիչ Յալհաննէս Դպիր: Մաղկող և կազմող Մեսրոպ Դպիր Խիզանցի: Մատող պարոն Ապով. — Զեռ. Նոր Զուզայի, թիւ 213:

Ն. ԱՐՔ. ՆՈՎԱԿԱՆ



ՅԻՍՈՒՆԻ ՏԱՐԻ ԸԹԵՎԶ

ՄՐԲՈՑ ՅԱԿՈՒԲԵԱՆՑ ՏԱՅԱՐԻ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Ա. Յակոբեանց Մայր Տաճարի փայտաշէն անշուք զանգակատանը բոլորով վին հինգած ըլլալով, Պէթօն-Ամբէով ի նորոյ շինուեցած, յար և նման Ս. Էջմիածնի զանգակատան կոթողիկէին:

Եինութեան ճարտարապետն էր Երևաղէմասցի Մեծայարք Ժիար Մերկեր Մերկեան և հսկող նոյնակէս Երևաղէմասցի Մեծայարք Ժիար Դէորդ Սահակեան Առնոց մէջն ջան նուիրեցին զանգակատան վայելուչ և ճաշակաւոր կառուցած մին համար, և շինութեան ամբողջ ժախթը իրենք հոգացին հաւասարապես, ի յիշակ իրենց բարեկալչուն գերդաստաններու ննջեցնալներուն:

Այս առթիւ, Ա. Աթոռոյա Պատր. Տեղապահ Գերշ. Տ. Մեսրոպ Արքացունի կողմէ օրնուանեան և գոհաւակութեան մէջ մէկ գիր ուղարկեցաւ վերոյիշեալ բարեսէր և սկզբանակէր պայտայիններուն:

(«Արևո», 1981, Խ. Յարի, Մարտ,
Թիր 3, էջ 96):

Ա. ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆԿԱՆ ՄԱՍՈՒՆՔԸ

Վահեմ. Արմենակ Պէյ կամարական Աղիքասոնդրիս մէջ պատահական վահառողէ մը գնած ըլլալով Աջի մը մէջ ամսութաւ մանուկ Ս. Կիրակոսի մասունդր Քերիսոսի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգուած Արքեպօսի (Խուշակեան, Կետապային Պատրիարք Ս. Աթոռոյ, Մ. Խ.) խնդրուաց վրայ, նուիրեց Ս. Յակոբեանց Տաճարին:

Տ. Թորգուած Արքեպօսի այս առթիւ Գերշ. Պատր. Տեղապահ Մրացանին ուղացած նամակէն քաղելով կու առնք Աջին նկարուգութեանը.

Աջին երկարութիւնն է իր 30 առնթիմ, վերնամասը, այսինքն դասակին վերի ծայրը ունի 14 սանթիմետ շրջա-

նակ մը. որ կը վերջաւորուի 17 փերուզ քարերով, ընդելուզուած ըստ մասին թեմիարի ապարանջանով մը, որ փակցըւած է ագուցուած տեղին վրայ. Նոյնպիսի ապարանջան մը փակցուած է նուե դասակի վարի մասին վրայ, ընդելուզուած միով պակս 14 նոյնպիսի քարերով։ Վերի ապարանջանին ներքեւ, երեք կարգ երկաթագիր տառերով փորագրուած է ոս յիշասակարանը. ՍԲ. Աջն ՆՈՐՈՒԵՌ ՑԵԼԻՔԻՍԵԹ ՎԱՐԴԱՎԵՏԻ ՑԻՇԱՍԱԿ ՄԵՐԻ ՍԲ. ՈՎԱՆԵՍԱԿ ՎԱՆԵՑՆ ՈՐ է ԲԱՇՈՒԿ ՏՀԱՑ ՄԱՆՈՒԿ ՍԲ. ԿիրԱԿՈՍՍ. ԹՎՈՒ ԲՄԴ (= 1754) ԱՄԻՒՆ. Խոկադէնքն վարի ծայրը փակուած է գգրէթաձեւ և պառաւակաւոր կափարիչով մը, որուն կիդրոնն օրով մը հաստատուած է։ Դասակին վարի կէսին վրայ, ճակատի կողմը, կայ չէին իշի բանուած Ս. Կոյսմը, որ գիրին ունի Ցիսուս Մանուկը, և նստած է երկանին խաչածայր խորանի մը ներքեւ, Նիւթն է արծոթ ոսկէջրած, արտեստան է սառե կիւզել, հաստակին ափի կողմը քիչ մը ճմրուած կ'երկէւ։

Գերշ. Պատր. Տեղապահ Մրացանը այս նուիրական ընծայարերութեան առթիւ օրնուաթեան և շնորհակուլութեան գիր մը ուղղեց Վահեմ. Արմենակ Պէյ Կամարականի։

ԲԵՄԱՆԶԻՒՍ ՌՈՒԲԵՆ

Երուսաղէմ ալ բախտն ունեցաւ վայելելու Քէմոնչիստ Խուրէնի Էմմանջէին դիւթանքը։

Հանրային նուագահանդէսէն եաք, զոր տուաւ քաղաքիս մէջ, ուր մեծապէս գնահատուեցաւ ըլլայ Հրէական ըլլայ Արքացան շրջանակներէ՝ ընդունելով տնկեղծ և խանդագատ գնահատանքներ տեղական թերթերու մէջ, Պր. Խուրէն մեծ հաճոյք պատճենեց նաև Սուրբ Աթոռոյա Միաբանութեան և գպրցներու աշակերտաւթեան համար ալ զատ նուագահանդէս մը աւազվ ժառանգաւորաց Վարժարանի սրբանին մէջ, ԲՀ. 16 Մարտի երկայիւն:

(«Արևո», 1981, Խ. Յարի, Ապրիլ,
Թիր 4, էջ 135-136):

«ՍԻՐՆ» և ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պր. Վ. Գ., վանքարնակ, կը հարցնէ.

«Գիտենք թէ Կաթողիկ Եկեղեցւոյ գլուխը կը գտնուի Հռովմայ Արբազան Քահանայապետը, իսկ Հայց Եկեղեցւոյ գերագոյն պետն է Մայր Աթոռ Ս Էջմիածնի Գահակալը։ Կ. Պոլսոյ Յունաց Տիեզերական Պատրիարքն ալ ունի՞ նոյն գիրքը Օրթոսոք Եկեղեցւոյ մէջ։»

Նուիրապետական կարգն ու վարչական գրութիւնը մի քիչ տարբեր է Օրթոսոք Եկեղեցւոյ մէջ։ Տիեզերական Պատրիարքը կը վայելէ անուանական գերագոյութիւն մը միայն, նկատուելով տառաջինն ի հաւասարաց, տանց իրաւուսութիւն ունենալու իր թեմէն գուրս, այլ Պատրիարքութեանց ենթակայ թեմերու գործերուն միջամտու ըլլալու։ Յիշնէ այսու թէ 8 Պատրիարքութիւններ ունի Ներկայի Օրթոսոք Եկեղեցին, առոնցմէ չորսը ուրղակի Յօնանակոն հն, կը դանուին Մերձաւոր Արքելքի շրջանակին մէջ և պատժական Աթոռներ են։ Անոնք են, իրենց հաստատման կարգով, Պոլսոյ Աթոռէն ետք, Աստիքքի (Արքայիս՝ Պէյրութ), Աղեքսանդրիոյ (Ներկայի՝ Գահիրէ) և Երւանազէմի Աթոռները։ Վերջինս հաստատուած է 451ին, Քաղկեդոնի Ժողովի գումարման տարին, երբ պատկտում և հերձուած յառաջ եկած է Քրիստոսի Մի և Ընդհանրական Եկեղեցւոյ մէջ, Կ'արծէ յիշել թէ Երուսաղէմի առաջին

Անգլիացի մեծանուն գրագէտ Ջորջ Պէրնորտ Շօ, 13 Մարտ Ուրբաթ երեկու յին Վանքս այցելեց անակնակալօրէն, Սըր Ռոնալդ Սթօրսի յանձնարարականով։ Աշխարհանչաչ հիւրը կործանե միջոցի մը համար միայն Երուսաղէմ եկած է իր։ Հակառակ ժամանակի անյարմարութեան և այցելութեան յանկարծութեան՝ Պր. Շօ Պատրիարքութանի դահլիճին մէջ ընդունուեցաւ պատշաճ մեծարանքով։

(Նոյն անգ, էջ 127):

Հայ Պատրիարք իրըն կը յիշուի Արքանամ անուն մէկը, 638 թուականին, որ է ըսել Սուրբ Գաղտնաքին Արքա-իսրամական գրաւուածէն տորի մը ետք, մինչ Հատինաց Երուսաղէմի Պատրիարքութիւնը հաստատուած է 1843ին միայն, և անկէ առաջ ու մինչև այսօր Սրբաւելեաց Երսկողութեան ու պահպանաթեան պաշտօնը վստահուած է Ֆրանչէսկեան Միարանութեան, գլուխը ունենալով Կիւսթառը, որ վարդապետի աստիճան ունի միայն և կը նշանակուի Ս. Պապէն (Ճիշդ ինչպէս իրենց Պատրիարքը, մինչ Յունաց և Հայոց Պատրիարքները կ'ընտրուին պատկան Միարանութեան կողմէ և գահ կը բարձրանան տեղական իշխանութենէն ճանաչման հրովարտակը ընդունելէ ետք) Յարութեան պաշտօնավարութեան ըրջանի մը համար։

Օրթոսոք Եկեղեցւոյ չորս միւս Պատրիարքութիւնները հաստատուած են աւելի ուշ ժամանակներու մէջ և կը ներկայացնեն կրօնական բարձրագոյն իշխանութիւնը Յունադաւան Սլու ժողովուրդներու, Այսպէս, գոյութիւն ունին Խուսիոյ, Խուսանիոյ, Պուլկարիոյ և Եսոկուլուիոյ Պատրիարքութիւնները, իրավանչիւրը հաստատուած ասեւել Երկիրներու մայրաքաղաքին մէջ — Մասկուս, Պուլքէշ, Սօֆիա, Պէլկրուս, Կայ նաև, առոնցմէ զատ, Վրայ Պատրիարքութիւնը, որուն Աթոռակալը կը կրէ «Պատրիարք-Կաթողիկոս» տիտղոս։

Հետաքրքրական է դիտել տալ որ Յունաստանի մայր հողին վրայ գոյութիւն չունի Պատրիարքական Աթոռ, և Օրթոսոք Եկեղեցւոյ անսւանական Պետին կայքը կը մնայ տակաւին Բիւզանդական կայսերութեան երեմնի մայրաքաղաքը, հակառակ աւելի քան հինգ դարերուն, որոնք անցած են յիշեալ կայսրութեան փլուզումէն ասդին։



«Սիոն»ի Խմբագրութիւնը կը շարունակէ տակաւին արտասահմանի իր ընթերցողներէն ստանալ գնահատական և քաջալիրական գրութիւններ՝ անցեալ աժամ կաչյացած Ստղիմանայ Հոգեորականաց Համագումարին և այդ տոթիւ լոյս տեսած Ամսագրիս բացառիկ թիւին համար։ Ստորև՝ Ամերիկայէն հասած երկու նամակներ։ —

Սեպտ. 5, 1980

Գերշ. Տ. Շահէ Արքեպս.

Պատրիարքարան Հայոց

Երուսաղէմ

Սիրելի Սրբազն Հայր,

Ամիս մը առաջ, այսօր կը վայելէինք ձեր սքանչելի հիւրասիրութիւնը Երուսաղէմի մէջ։ Այդ օրերու հոգին, մթնոլորտը, ուրախութիւնը եւ եռուզեռը դեռ մէջս է։ Եւ վստահ եմ որ դուք մէջս ալ պիտի մնայ։

Որբան գեղեցիկ առաջադրութիւն մըն էր ձեր ունեցածը։ Եւ ինչ բաներ փոխեցին այդ քանի մը օրերը գտնէ իմ մէջս։

